ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի հոկտեմբերի 8-9-ը Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը.
Անահիտ Գալստյան

2. Զբաղեցրած պաշտոնը.
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.
Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2018 թվականի հոկտեմբերի 8-9-ը

4. Հրավիրող կողմը.
Եվրասիական տնտեսական հանձնաժողով

***5.* Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*
Մասնակցություն կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությանը

6. Քննարկված թեմաները.
1) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի նախագիծը (այսուհետ՝ Համաձայնագրի նախագիծ),
2) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի կիրառման կարգի նախագիծ (այսուհետ՝ Կարգի նախագիծ)

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
Օգոստոսի 8-ին և 9-ին կայացած խորհրդակցություններում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասնագետների, ԵՏՄ անդամ պետությունների կենսաթոշակային ապահովության բնագավառում լիազոր, իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվել են Համաձայնագրի և Կարգի նախագծերը: Խորհրդակցությունները վարում էր Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության վարչության պետ Պ. Ու. Սույումբաեվան:

Խորհրդակցության ընթացքում ամփոփվեցին Համաձայնագրի նախագծի՝ Հայաստանի Հանրապետությունում ներպետական համաձայնեցման գործընթացի արդյունքները, ինչպես նաև ղազախական կողմի դիրքորոշումը նախորդ քննարկման ընթացքում իրենց կողմից ներկայացված՝ Համաձայնագրի նախագծի 10-րդ հոդվածի 7-րդ մասի առաջարկության վերաբերյալ:

ՌԴ-ն ներպետական համաձայնեցման գործընթացի արդյունքները դեռևս չէր ներկայացրել:

Հայաստանի Հանրապետությունում ներպետական համաձայնեցման գործընթացի արդյունքներով առաջարկվել էր՝

1. խմբագրել Համաձայնագրի նախագծի 2-րդ հոդվածի 2.1-ին կետի 2-րդ ենթակետը, 3-րդ և 4-րդ հոդվածները՝ նպատակ ունենալով ՀՀ-ում կուտակային կենսաթոշակների նշանակմանը և վճարմանն առնչվող հարաբերությունները չդարձնել պայմանագրի կարգավորման առարկա,

2. Համաձայնագրի նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետում անհատական կենսաթոշակային գործակցի արժեքը 1-ի փոխարինել 1.8 (երբ ՌԴ տարածքում ձեռք բերված աշխատանքային ստաժը բավարար չլինելու դեպքում կենսաթոշակի իրավունքը որոշելու համար հաշվի է առնվում նաև ԵՏՄ այլ անդամ պետությունների տարածքներում ձեռք բերված աշխատանքային ստաժը, գումարային աշխատանքային ստաժով կենսաթոշակի իրավունքը որոշելիս ԵՏՄ այլ անդամ պետությունների տարածքներում ձեռք բերված աշխատանքային ստաժի յուրաքանչյուր տարվա համար ИПК-ն սահմանել 1.8[1]):

3. Համաձայնագրի նախագծի 10-րդ հոդվածի 6-րդ կետը վերախմբագրել՝ նպատակ ունենալով հստակեցնել մի պետությունում նշանակված և ավել վճարված կենսաթոշակի գումարն այլ պետությունում նշանակված և վճարվող կենսաթոշակի գումարից հօգուտ ավել վճարած պետության պահելու հիմքերը (ավել վճարված կենսաթոշակի գումարն այլ անդամ պետության կողմից վճարվող կենսաթոշակի գումարից հետգանձումը հնարավոր է, եթե այդ կենսաթոշակի վճարումն ավել վճարած պետությունում դադարել է և չկա այդ գումարը հետ գանձելու այլ եկամուտ):

---

[1] ՌԴ օրենսդրությամբ տարիքային պահանջից բացի, կենսաթոշակի իրավունք տվող պայմաններն են՝ 15 տարվա աշխատանքային ստաժ (2024 թվականից) և 30 անհատական կենսաթոշակային գործակից՝ ИПК (2025 թվականից), որի հաշվարկման հիմքում դրված են հաշվարկված և ՌԴ կենսաթոշակային համակարգ վճարված ապահովագրական վճարները:

Առաջին առաջարկությանը բովանդակային առումով կողմերը համաձայնվեցին և քննարկման արդյունքներով համաձայնություն ձեռք բերվեց առաջարկվող մոտեցումն այլ կերպ արտացոլել Համաձայնագրի նախագծում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համաձայնագրի նախագծով կարգավորվում են ոչ միայն կենսաթոշակների նշանակմանն ու վճարմանը, այլ նաև կենսաթոշակի իրավունքի ձևավորմանն առնչվող հարաբերությունները, կողմերը համաձայնվեցին՝ նախագծի 2-րդ հոդվածի 2.1-ին կետի 2-րդ ենթակետում թվարկվող՝ ՀՀ-ում վճարվող կենսաթոշակների կազմում թողնել կուտակային կենսաթոշակների անվանումը, սակայն հոդվածն ավելացնել նոր կետով, որի համաձայն՝ պարտադիր կուտակային կենսաթոշակը ՀՀ-ում նշանակվում և վճարվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Երկրորդ առաջարկությանը կողմերը չհամաձայնվեցին:

Երրորդ առաջարկությունը հայկական կողմը ներկայացրել էր՝ հաշվի առնելով նախորդ՝ ս.թ. օգոստոսի 15-ին կայացած խորհրդակցության ընթացքում ձեռք բերված համաձայնությունը:

Կողմերը քննարկեցին խնդրո առարկա դրույթի վերաբերյալ թե՛ հայկական և թե՛ ռուսական կողմի առաջարկությունը: Ձեռք բերվեց ընդհանուր համաձայնություն Համաձայնագրի նախագծի 10-րդ հոդվածի 6-րդ կետի նոր խմբագրության շուրջ:

Խորհրդակցությանը քննարկվեց նաև Համաձայնագրի նախագծի 10-րդ հոդվածի 7-րդ մասի խմբագրության վերաբերյալ ղազախական կողմի առաջարկությունը: Հաշվի առնելով ներկայացված առաջարկության հետ կողմերի անհամաձայնությունը, ղազախական կողմի ներկայացուցիչները հայտարարեցին, որ իրենց մոտեցումը մեկ անգամ ևս կքննարկեն իրենց իրավասու մարմինների մասնագետների հետ՝ ներկայացնելով կողմերի անհամաձայնության հիմքերը:

Քննարկվեց նաև ռուսական կողմի առաջարկությունը՝ Համաձայնագրի շրջանակներում անձին նշանակված կենսաթոշակի վճարումը այդ անձի՝ երրորդ երկիր տեղափոխվելու դեպքում շարունակելու վերաբերյալ: Կողմերը չհամաձայնվեցին ներկայացված առաջարկությանը:

Ռուսական կողմի մեկ այլ առաջարկությամբ և կողմերի համաձայնությամբ Համաձայնագրի նախագծի 4-րդ հոդվածը լրացվեց նոր կետով՝ բնակության վայրը փոխելու դեպքում կենսաթոշակի իրավունքն իրացրած անձի կենսաթոշակը վերահաշվարկվում է Համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ առանց կենսաթոշակի իրավունքը վերանայելու:

Հոկտեմբերի 8-ին՝ օրվա երկրորդ կեսին և հաջորդ օրը հոդված առ հոդված քննարկվեց Կարգի նախագիծը, մասնավորապես ս.թ. օգոստոսի 15-ին կայացած

խորհրդակցության արդյունքներով կողմերից ստացված առաջարկությունները՝ հաշվի առնելով տեղեկատվության փոխանակման ձևաչափերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Քննարկման արդյունքում որոշվեց՝

1) խնդրել ռուսական կողմին արագացնել Ռուսաստանի Դաշնությունում իրականացվող Համաձայնագրի նախագծի ներպետական համաձայնության գործընթացը,

2) խորհրդակցության արդյունքներով լրամշակված Համաձայնագրի նախագիծը ներկայացնել Հանձնաժողովի Կոլեգիայի, իսկ այնուհետև՝ Հանձնաժողովի Խորհրդի քննարկմանը՝ Համաձայնագրի նախագիծը ստորագրման համար ներպետական գործընթացների ուղարկելու նպատակով,

3) խորհրդակցության արձանագրությամբ սահմանված ժամկետում հանձնաժողովը կլրամշակի Կարգի նախագիծը և կարծիքի կուղարկի կողմերին, որոնք դրա վերաբերյալ իրենց դիրքորոշումը կներկայացնեն Հանձնաժողովին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկությունները Հանձնաժողով կներկայացվեն գրավոր՝ կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցության արձանագրության համաձայն՝ նրանում նշված ժամկետներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

22.10.2018թ.